



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«25» 08 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐԴՎԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0153-21

Ձեռնարկողը՝

«Մգրիգ» ՍՊԸ
ք. Երևան, Աջափնյակ, Մելիքյան փ. 68

Գործունեությունը՝

Ձորաղբյուրի փուֆերի հանքավայրի արդյունահանման
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվեկրկություն
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՃԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 0153-21

<25> 08 2021թ.

Արագածոտնի մարզի Ձորաղբյուրի տուֆերի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«Մգրիգ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Ա կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արագածոտնի մարզ, Մաստարա համայնք

Ներածական մաս. Ձորաղբյուրի տուֆերի հանքավայրը վարչական առումով գտնվում է Արագածոտնի մարզի Մաստարա համայնքում, Ձորագյուղ գյուղից 1կմ հեռավորության վրա:

Հայցվող տեղամասի հողի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր:

Տեղամասի տարածքը տեղակայված է 1918-1943մ բացարձակ բարձրությունների վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Արագածոտնի մարզի Ձորաղբյուրի տուֆերի հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ՕՀՊ գործակալության կողմից, 22.11.2013թ-ի թիվ 359 որոշմամբ հետևյալ քանակներով և կարգով՝ 420.2հազ.մ³ ըստ B կարգի: Ուղիղ կտրվածքի պատքարի ելքը կազմում է 34.4%:

Օգտակար հաստվածքում ընդգրկված տուֆերը ըստ որկական ցուցանիշների ապահովում են «Պատքարեր լեռնային ապարներից» 4001-84 ԳՈՍՍ-ի պահանջները բավարարող վերջնարտադրանքի ստացումը և իրենց ճառագայթահիգիենիկ հատկություններով կարող են օգտագործվել շինարարության մեջ:

Սույն նախագծով նախատեսվում է.

- հանքավայրի տեղամասը մշակել բաց լեռնային աշխատանքներով,
- հանքարդյունահանման աշխատանքներն իրականացնել ցածրաստիճանային, CMP-026 մակնիշի քարհատ մեքենաներով,
- հանքարդյունահանման աշխատանքները կատարել շուրջ տարյա աշխատանքային ռեժիմով,
- կատարել խախտված հողերի լեռնատեխնիկական վերակուլտիվացիա,



- բացահանքային դաշտի օտարման տարածքը կազմում է 5.36հա, մարվող պաշարների ծավալը՝ 420300.0մ³ ըստ В կարգի, արդյունահանվող պաշարների ծավալը – 392560.0մ³:
 - հանքավայրը շահագործվելու է 2 բացահանքով,
 - մակաբացման ապարների ծավալը - 76169.0մ³,
 - բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 20 տարի,
 - բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ տուֆի մարվող զանգվածի կազմում է՝ 21015.0մ³, իսկ ըստ արդյունահանվող զանգվածի՝ 19628.0մ³:
- Բացահանքերի անկյունային կետերի ARM WGS-84 համակարգով տրված հետևյալ ծայրակետային կոորդինատներով.

Բացահանք թիվ 1	Բացահանք թիվ 2
1. X=8408249.0000 Y=4481548.0000	1. X=8408092.0000 Y=4481796.0000
2. X=8408268.0000 Y=4481424.0000	2. X=8408197.0000 Y=4481775.0000
3. X=8408148.0000 Y=4481410.0000	3. X=8408219.0000 Y=4481681.0000
4. X=8408019.0000 Y=4481549.0000	4. X=8408238.0000 Y=4481609.0000
5. X=8408041.0000 Y=4481646.0000	5. X=8408235.4801 Y=4481602.7919
6. X=8408042.0175 Y=4481650.4861	6. X=8408219.8654 Y=4481610.1519
7. X=8408084.4364 Y=4481634.2953	7. X=8408175.9664 Y=4481629.0516
8. X=8408115.7925 Y=4481629.9839	8. X=8408157.1763 Y=4481639.8455
9. X=8408136.5635 Y=4481615.0901	9. X=8408141.0307 Y=4481659.8964
10. X=8408172.2280 Y=4481592.8810	10. X=8408097.1097 Y=4481671.8969
11. X=8408201.4048 Y=4481582.6705	11. X=8408054.2009 Y=4481684.7626
12. X=8408247.7883 Y=4481555.9077	12. X=8408057.0000 Y=4481693.0000
S = 3.69հա	S = 1.98հա

Հաշվի առնելով հանքավայրի տարածքով անցնող ձորակի առկայությունն, որը հանքավայրը բաժանում է երկու հատվածի՝ օգտակար հանածոն մշակվելու է երկու առանձին բացահանքերով, նախ արդյունահանվում է թիվ 1 բացահանքի օգտակար հանածոյի պաշարները, այնուհետև՝ թիվ 2 բացահանքը:

Հանույթային աշխատանքներն իրականացվելու են CMP-026 մակնիշի քարհատ մեքենաներով: Նախագծված բացահանքերի պարամետրերն են՝

	Բացահանք 1	Բացահանք 2
- առավելագույն երկարությունը	- 298.0մ,	200.0մ
- առավելագույն լայնությունը	-180.0մ,	177.0մ
-մշակման խորությունը	- 25.0մ,	19.0մ
-աշխատանքային հանքաստիճանի բարձրությունը	- 0.42մ;	
- մարված հանքաստիճանի թեքման անկյունը	- 900;	
- աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը	- 14մ:	
- օտարման տարածքը	- 3.69հա, 1.97հա	

Բացահանքերի շահագործման ընթացքում հաշվարկված են հետևյալ կորուստները.

